ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/186

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
Մասնակից՝ «Ջի Էմ Պրո» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Ջի Էմ Պրո» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Զ. Մելիքսեթյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, համակարգչային տեխնիկայի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 13.07.2021թ.-ի թիվ 26/26/11256-2021 գրությամբ «Ջի Էմ Պրո» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 06.07.2021թ.-ի թիվ 02-192/21 գրության հիման վրա, 13.07.2021թ.-ին «Ջի Էմ Պրո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 13.07.2021թ.-ին:

13.07.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/186 համարի ծածկագիրը:

21.07.2021թ.-ին և 30.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 21.07.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.07.2021թ.-ին:

2. **<u>«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն 06.07.2021թ.-ի թիվ 02-192/21 գրությամբ, դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը, հայտնել է հետևյալը.

««Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության կարիքների համար «Համակարգչային տեխնիկայի» ձեռքբերման նպատակով 2021 թվականի հունիսի 3-ին հայտարարվել է ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/20 ծածկագրով գնման ընթացակարգի հայտարարությունը և հրավերը:

2021 թվականի հունիսի 10-ի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստում, մրցույթի մասնակից «ՋԻ ԷՄ ՊՐՈ» ՍՊԸ-ն որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից ճանաչվել է ընտրված մասնակից:

2021 թվականի հունիսի 18-ին հիմք ընդունելով ՀՀ գնումների մասին օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ ծանուցել է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի

նախագիծը: Սակայն «ՋԻ ԷՄ ՊՐՈ» ՍՊԸ-ն խախտել է ՀՀ գնումների մասին օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները՝ պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի ապահովումը:

Հիմք ընդունելով ՀՀ գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ ենթակետը, և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 45-րդ կետ, խնդրում ենք Ձեզ՝ «ՋԻ ԷՄ ՊՐՈ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/20» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Ջի Էմ Պրո» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Ջի Էմ Պրո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 13.07.2021թ.-ին գրությամբ դիմել է «Ջի Էմ Պրո» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.07.2021թ.-ի թիվ 26/26/11256-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

«Ջի Էմ Պրո» ՍՊԸ-ն 15.07.2021թ.-ի թիվ 021 գրությամբ ներկայացված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Ջի Էմ Պրո» ՍՊԸ-ն գտնում է, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման հետևյալ հիմնավորման.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ Օրենք/ 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա պատվիրատուի կողմից,

2. Սույն օրենքի 10րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը,

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում 15 աշխատանքային օր:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ինչպես նաև հաշվի առնելով ՍՅ-ԼՕ-2021/55 ծածկագրով որոշմամբ Ձեր կողմից կատարված եզրահանգումները:

«Ջի էմ Պրո» ՍՊԸ-ն 18.06.2021թ. ստանալով Պատվիրատուից պայմանագիր կնքելու առաջարկը Օրենքով նախատեսված ժամկետում 02.07.2021թ. կապի ծառայության «Հայփոստ» ՓԲԸ-ի միջոցով /Հայփոստի անդորրագիրը և ուղեկցող գրությունները կցվում են/ պատվիրատուին ներկայացվել է ընկերության կողմից հաստատված պայմանագիրը, որակաորման և պայմանագրի ապահովման կնքված և ստորագրված օրինակները:

Այսինքն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.07.2021թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով ընդունված /«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6- րդ կետի բ/ ենթակետի «Ջի Էմ Պրո» ՍՊԸ-ի հայտը մերժել, որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիրը կնքելուց/ որոշումը չունի ոչ մի իրավական հենք, ինչն էլ հիմք է հանդիսացել «Ջի Էմ Պրո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգի նախաձեռնման:

Միաժամանակ տեղեկացնում եմ Ձեզ, որ պայմանագիրը, որակորման և պայմանագրի ապահովման կնքված և ստորագրված օրինակները ուղարկվել են Հայփոստի միջոցով «Ջի Էմ Պրո» ՍՊԸ-ի տնօրենի Արագածոտնի մարզում գործուղման մեջ գտնվելու հանգամանքով պայմանավորված:»:

4. <u>ՍՑ-LO-2021/186 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով 03.06.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ջի Էմ Պրո» ՍՊԸ-ն:

ii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.06.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ջի Էմ Պրո» ՍՊԸ-ն գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից:

iii. 14.06.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

iv. Պատվիրատուն 18.06.2021թ.-ին Մասնակցին ներկայացնելով «ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/20» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ հայտնել է, որ Մասնակցի հետ կարող է կնքվել պայմանագիր 105480 ՀՀ դրամի չափով պայմանագրի կատարման ապահովում և

158220 ՀՀ դրամի չափով որակավորման ապահովում ներկայացնելու դեպքում՝ ծանուցմանը հաջորդող օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում հաստատված պայմանագրի նախագիծը և դրա ներկայացման գրությունը կամ Մասնակցի կողմից ընդունվող որոշման մասին տեղեկություններընեկայացնելով ք. Երևան, Գ. Հովսեփյան 26 հասցեով:

v. Մասնակցի կողմից տրամադրված փոստային կտրոնի /առաքանի՝ թիվ 1, կոդը՝ RR297933788AM/ համաձայն՝ «Ջի Էմ Պրո» ՍՊԸ-ն 02.07.2021թ.-ին պատվիրված նամակով «ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին (հասցե՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26) ուղարկել է առաքանի:

vi. www.haypost.am կայքի ուսունասիրության արդյունքում պարզվել է, որ փոստային կտրոնի /առաքանի՝ թիվ 1, կոդը՝ RR297933788AM/ համաձայն՝ առաքանին հանձնվել է հասցեատիրոջը՝ 08.07.2021թ.-ին, ժամը 09:41-ին:

vii. Հանձնաժողովի 02.07.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Ջի Էմ Պրո» ՍՊԸ-ն որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.07.2021թ.-ի թիվ 26/26/11256-2021 գրությամբ «Ջի Էմ Պրո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ

մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ իր գործողություններով (անգործությամբ) պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կողմից համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով 03.06.2021թ.-ին հայտարարված «ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.06.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Ջի Էմ Պրո» ՍՊԸ-ն գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից, ինչով պայմանավորված 14.06.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ: Պատվիրատուն 18.06.2021թ.-ին Մասնակցին ներկայացնելով «ՀՀՀ-

ԳՀԱՊՁԲ-21/20» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ հայտնել է, որ Մասնակցի հետ կարող է կնքվել պայմանագիր 105480 ՀՀ դրամի չափով պայմանագրի կատարման ապահովում և 158220 ՀՀ դրամի չափով որակավորման ապահովում ներկայացնելու դեպքում՝ ծանուցմանը հաջորդող օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում հաստատված պայմանագրի նախագիծը և դրա ներկայացման գրությունը կամ Մասնակցի կողմից ընդունվող որոշման մասին տեղեկությունները ներկայացնելով ք. Երևան, Գ. Հովսեփյան 26 հասցեով: Սակայն Հանձնաժողովի 02.07.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Ջի Էմ Պրո» ՍՊԸ-ն որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Սույն գործում առկա՝ Մասնակցի կողմից տրամադրված փոստային կտրոնի /առաքանի՝ թիվ 1, կոդը՝ RR297933788AM/ համաձայն՝ «Ջի Էմ Պրո» ՍՊԸ-ն 02.07.2021թ.-ին պատվիրված նամակով «ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին (հասցե՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26) ուղարկել է առաքանի: www.haypost.am կայքի ուսունասիրության արդյունքում պարզվել է, որ փոստային կտրոնի /առաքանի՝ թիվ 1, կոդը՝ RR297933788AM/ համաձայն՝ առաքանին հանձնվել է հասցեատիրոջը՝ 08.07.2021թ.-ին, ժամը 09:41-ին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս գալ այն եզրահանգման, որ «Ջի Էմ Պրո» ՍՊԸ-ն, հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ 18.06.2021թ.-ին, էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ 02.07.2021թ.-ին, կապի կազմակերպությանն է հանձնել պահանջված փաստաթղթերը, որը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով համարվում է ժամկետում հանձնված:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ջի Էմ Պրո» ՍՊԸ-ն, որպես ընտրված մասնակից, Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ 02.07.2021թ.-ին, Պատվիրատուին ներկայացրել է պայմանագիրը, որպիսի պայմաններում Մասնակիցը չի հրաժարվել պայմանագիր կնքելուց:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.07.2021թ.-ի թիվ 26/26/11256-2021 գրությամբ «Ջի Էմ Պրո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/186 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**